

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ենգիդունյան Վահան Վարդանի **«Տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները ՀՀ խոշորացված համայնքներում (սոցիոլոգիական վերլուծություն)»** թեմայով, ներկայացված

ԻԲ-00.01-«Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսությունում գիտական պատշաճ վերլուծության է առնված ժամանակակից հայրենական սոցիոլոգիական քննախոսության և հետխորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար մեծ կարևորություն ունեցող վերջին տասնամյակում իրականացված ամենախոշոր ինստիտուցիոնալ բարեփոխումներից մեկը՝ համայնքների խոշորացման գործընթացն ու արդյունավետ տարածքային պլանավորման հիմնախնդիրները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքների խոշորացման գործընթացը դեռ նոր է, իրականացվել է մի քանի փուլով, տարբեր մեթոդաբանական հիմքերի վրա, հաճախ նաև շեղումներով, իսկ դրա արդյունքների գնահատմանը, հետևանքների ուսումնասիրմանն ուղղված, հիմնախնդիրների բացահայտման նպատակով իրականացված հետազոտությունները սակավ են և հատվածային բնույթ ունեն, ատենախոսության թեման խիստ արդիական է և հիմնավորված:

Աշխատանքում քննության են առնվել այնպիսի հիմնարար երևույթներ, ինչպիսիք են տարածք-հասարակություն փոխազդեցությունները, տեղի և համայնքի զգացումը, լիդերության և սոցիալական կապիտալի դերը, ինչպես նաև ՏԻՄ-երի կարողունակության և բնակչության մասնակցության մեխանիզմները: Հեղինակն իր ատենախոսությունում ցույց է տալիս, որ տարածքային կառավարման

արդյունավետությունը չի սահմանափակվում կառավարչական ինստիտուցիոնալ լուծումներով, այլ խորապես պայմանավորված է սոցիալ-տարածական պրակտիկաներով և դրանց նկատմամբ բնակչության ընկալումներով:

Աշխատանքում համապարփակ վերլուծվել են ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման համակարգի սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման պրակտիկաները, տարածքային պլանավորման և կառավարման հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունների արդյունքները և վիճակագրական և ժողովրդագրական տվյալները, որոնք համալրվել են հեղինակի կողմից իրականացված քանակական հետազոտության տվյալներով և դրանց խորքային վերլուծությամբ:

Հեղինակի կողմից իրականացված վերլուծությունն արժեքավոր և նշանակալից նյութ է առաջարկում ոչ միայն ՀՀ-ում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների ուսումնասիրման և տեսական հայեցակարգման տեսանկյունից, այլև գործնական՝ քաղաքականությունների մշակման և արդյունավետ իրագործման տեսանկյունից:

2. Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների վերհանումն է: Վերոհիշյալ նպատակից բխող խնդիրների շարքում սահմանվել է բնակչության սոցիալ-տարածական պլանավորման և տարածական ներգրավվածության առանձնահատկությունների բացահայտումը, «տեղի զգացման», «համայնքի զգացման», «տեղի կապվածության» և «տեղի ինքնության» բազմաչափ դրսևորումների վերլուծությունը, տեղի լիզերության և ՏԻՄ-երի կարողունակության գործոնների ուսումնասիրությունը, բնակչության համայնքների խոշորացման վերաբերյալ ընկալումների բացահայտումը, տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության գնահատումը և այլն:

3. Հետազոտության արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետևյալ արդյունքներով՝

- Մշակված է «տարածքային կառավարման» նոր սահմանում՝ հիմնված տարածական կազմակերպման, տարածական վերահսկման և սոցիալ-տարածական պլանավորման բաղադրիչների վրա:
- Ներկայացված է տարածական ներգրավվածության գործոնային մոդել՝ հիմնված իմաստավորված տարածությունում ներգրավման ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական չափումների վրա, ինչպես նաև չափվում է առանձին գործոնների ազդեցությունը տարածական ներգրավվածության ցուցանիշների վրա:
- Իրականացված է տեղի կապվածության, համայնքի զգացման և տեղի ինքնության բաղադրիչներով կառուցվող տեղի զգացման գործոնային մոդելի կառուցվածքային ռելեվանտության գնահատումը և առանձին գործոնների ազդեցությունը տեղի զգացման ցուցանիշների վրա:
- Առանձնակի արժեքավոր է ատենախոսի կողմից առաջարկված «տեղի զգացում» եզրույթի նոր սահմանման փորձը:
- Առաջարկված են մոդելներ, որոնք ըստ սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման բաղադրիչների ցույց են տալիս նշյալներով պայմանավորված՝ ա. բնակչության շրջանում խոշորացման ազդեցության ընկալումները, բ. իրենց բնակավայրերում իրականացվող փոփոխություններին մասնակցության ցանկությունը:
- Իրականացված է սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկման առանձին բաղադրիչներով կլաստերիզացիա, որով և ըստ սոցիալ-տարածական պրակտիկաների առանձնացվել են ՀՀ խոշորացված համայնքները:
- Նկարագրված է, որ ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման համակարգի սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և

վերահսկման պրակտիկաների պարզ վերարտադրությունը հանգեցնում է բնակավայրերի բազմաչափ խոցելիության:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսությունն ունի գիտական և կիրառական նշանակություն, քանի որ ստացված արդյունքները կարող են նպաստել ինչպես պետական քաղաքականության ոլորտում արդյունավետ որոշումների ընդունմանը՝ ՀՀ պետական կառավարման և ՏԻՄ մարմինների կողմից՝ համայնքային զարգացման և տարածքային բարեփոխումների ծրագրերի մշակման ընթացքում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար՝ համայնքային մասնակցության մեխանիզմների զարգացմանը նպաստելու նպատակով, այնպես էլ ապագա գիտական հետազոտությունների իրականացման համար տեսամեթոդաբանական հենք հանդիսանալ:

Սույն աշխատանքը նաև կարող է նպաստել ոչ միայն համայնքային խոշորացման, այլև տարածքային բարեփոխումների ծրագրերի հնարավոր սոցիալական ազդեցության վերաբերյալ ինչպես հանրային, այնպես էլ մասնագիտական դիսկուրսի վերարժևորմանը:

Ատենախոսության հարուստ տեսական հատվածը կարող է մեծապես օգտակար լինել ոլորտին վերաբերող ուսումնակրթական ձեռնարկների և դասընթացների մշակման ընթացքում:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը ծավալուն է, պարունակում է հարուստ տեսական և էմպիրիկ նյութ, կառուցված է հստակ գիտական տրամաբանությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, յոթ ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Տրվում են, նաև երեք հավելվածներ: Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի գիտական ուսումնասիրվածության

աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ատենախոսության հիմնական վարկածն ու ենթավարկածները, ամփոփվել են ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության *առաջին գլխում* ներկայացված են տարածության և տարածքային կառավարման տեսական ու մեթոդաբանական հիմնախնդիրները: Քննության են առնվել դասական և ժամանակակից տեսություններ՝ բացատրելու աշխատանքի հիմնական հասկացությունները, ինչպիսիք են տեղի զգացումը (sense of place), տեղի ինքնությունը (place identity), սոցիալական կապիտալը (social capital) և տարածական հավասարությունը (spatial justice): Հեղինակը մանրակրկիտ վեր է լուծում տարածքային կառավարման պրակտիկաները, դրանց շարքում առանձին դիտարկելով նաև համայնքների խոշորացումը և դրա սոցիալ-տարածականությունը: Ատենախոսության *երկրորդ գլխում* ներկայացվել են ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների էմպիրիկ հետազոտության արդյունքների վերլուծությունը: Հետազոտությունն իրականացվել է քանակական հարցման, փաստաթղթերի ավանդական վերլուծության և տվյալների երկրորդային վերլուծության մեթոդների կիրառմամբ: Ստացված տվյալների վերլուծությամբ պարզվել են ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տարածական ներգրավվածության, տեղի զգացման, սոցիալական կապիտալի ինչպես նաև ՏԻՄ գործունեության և տարածքային փոփոխություններում լիզերության դերի ընկալման առանձնահատկությունները և այլն:

«Եզրակացություն» բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքները:

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը գերծ չէ որոշ թերություններից՝

- Աշխատանքի տեսական հատվածում հեղինակը մանրակրկիտ վեր է լուծում տարածքային կառավարման պրակտիկաները, դրանց շարքում առանձին դիտարկելով համայնքների խոշորացումը և դրա սոցիալ-տարածականությունը՝ տեսական ռեֆլեքսիայի ենթարկելով այդ խնդրով զբաղված արտերկրյա և տեղական տեսաբանների աշխատությունները (Քիլսիի, Քեյնիի, Մորիցենի, Դելանիի, Էթզիոնիի, Թաթոսյանի, Վարդանյանի և այլն), սակայն աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակն առանձին ենթազվխով անդրադարձ աներ այլ՝ մասնավորապես հետխորհրդային երկրների տարածքային կազմակերպման և կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաներին և համայնքների խոշորացման հաջողված և անհաջող փորձին, հատկապես հարևան Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում և այլն:

- Ատենախոսության շրջանակում հեղինակն իրականացրել է համալիր հետազոտություն քանակական հարցման, փաստաթղթերի ավանդական վերլուծության և տվյալների երկրորդային վերլուծության մեթոդների կիրառմամբ, այսինքն բացառապես հետազոտական քանակական ավանդույթի համատեքստում: Մինչդեռ տիպային խոշորացված համայնքներում իրականացված որակական հետազոտությունները՝ օրինակ՝ ֆոկլուս-խմբային քննարկումները կամ ֆոկլուսացված հարցազրույցները մեծապես կավելացնեին հետազոտության արժեքը՝ դարձնելով այն ավելի ընդգրկուն և համակողմանի:

- Համայնքների խոշորացման գործընթացի արդյունավետությունը պայմանավորող գործոնների շարքում հեղինակն արդարացիորեն նշում է միավորվող բնակավայրերի բնակչության սոցիալ-մշակութային առանձնահատկությունները (էջ 58-59): Հաշվի առնելով այս հանգամանքը, նշենք, որ աշխատանքն առավելապես կշահեր, եթե հեղինակը հետազոտության շրջանակում իրականացներ հատուկ դեպքերի ուսումնասիրություն՝ քեյս սթադիներ՝ որպես առանձին քեյսեր ընտրելով սոցիալ-մշակութային առանձնահատկություններով տարբերվող խոշորացված համայնքները, օրինակ.

✓ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները, որոնց հեղինակն ի դեպ շատ հպանցիկ է անդրադառնում աշխատանքում,

✓ կանանց կողմից ղեկավարվող, կամ կանանց մեծ թվով ավագանի ունեցող համայնքները, ինչը նաև կօգնեի առավել հիմնավոր ներկայացնել աշխատանքում արված եզրակացությունը կանանց ցածր մասնակցայնության և ներգրավվածության վերաբերյալ,

✓ երիտասարդ առաջնորդ, կամ երիտասարդների մասնակցությամբ ավագանի ունեցող համայնքները, ինչը թույլ կտար համադրված հետաքրքիր արդյունք ունենալ երիտասարդների մոտ «տեղի զգացման» և «համայնքի զգացման» վերաբերյալ և առաջարկություններ մշակել այդ հարցի շուրջ:

• Ինչպես նշվել էր ատենախոսության շրջանակում հեղինակի իրականացված հետազոտության հիմնական մեթոդը՝ քանակական հարցումն էր, որի հարցաթերթը ներկայացված է աշխատանքի Հավելված 3-ում (էջ 43-50): Ըստ հարցաթերթում ներառված հարցերի՝ խոշորացված համայնքներում փոփոխություններին բնակիչների մասնակցության ձևերն ու չմասնակցելու պատճառները, ինչպես նաև խոշորացման ազդեցության վերաբերյալ ընկալումները չափվում են հիմնականում բաց հարցերի միջոցով (էջ 47-48), այն դեպքում, երբ սոցիոլոգիական հետազոտությունների փորձը վկայում է, որ բաց հարցերի միջոցով ստացվող պատասխանները հաճախ անկատար են լինում՝ պայմանավորված թե՛ հարցվողների սահմանափակ ժամանակով, թե՛ արտահայտվելու դժվարություններով: Այս հանգամանքը կարող է հանգեցնել տվյալների թերի ներկայացման և վերլուծական սահմանափակումների: Ցանկալի կլինեի բաց հարցերից հետո ներառել ստուգիչ հարցեր (փակ կամ կիսափակ) մասնակցության ձևերի և չմասնակցության հիմնական պատճառների թվարկմամբ՝ նումինալ սանդղակի հիման վրա: Այսպիսի հարցադրումը ոչ միայն կբարձրացներ պատասխանների ամբողջականությունն ու համադրելիությունը, այլև հնարավորություն կտար ստացված տվյալների քանակական վերլուծության ավելի հուսալի մակարդակ:

• Աշխատանքի վերջում ձևակերպված առաջարկությունները սահմանափակ են թվով և ընդգրկմամբ, մինչդեռ աշխատանքում ներկայացված հետազոտական և վերլուծական նյութի հարստությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու ավելի բազմաբնույթ գործնական առաջարկություններ: Հաշվի առնելով, որ

կատարված ուսումնասիրությունն իր մեջ ներառում է ինչպես սոցիալ-տարածական, այնպես էլ ինստիտուցիոնալ ու մասնակցային գործոնների խորքային վերլուծություն, տրամաբանական կլիներ առաջարկությունների շրջանակը ընդլայնել ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման ուղղությամբ, այլև համայնքային զարգացման քաղաքականությունների մշակման, բնակչության մասնակցության խթանման և տարածքային կառավարման մոդելների կատարելագործման տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը և վերջինիս միանշանակորեն դրական գնահատականը:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են գիտական ամսագրերում հեղինակի հրապարակած 6 (վեց) հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Ատենախոսության հիմնական արժանիքներից է ուսումնասիրվող բարդ հիմնախնդիրների հստակ և համակարգված վերլուծությունն ու դրանց զարգացման ներքին տրամաբանության բացահայտումը: Հեղինակը ցուցաբերում է ժամանակակից սոցիոլոգիայի հիմնախնդիրների վերլուծության համար անհրաժեշտ ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ ընդհանուր հասարակագիտական պատշաճ գիտելիքներ: Ատենախոսական աշխատանքը ձևակերպված է բարեխղճորեն և գրագետ, առաջ քաշված մեթոդաբանական և մեթոդական խնդիրները լուծված են:

Վահան Վարդանի Ենգիդունյանի «Տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները ՀՀ խոշորացված համայնքներում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով

արդիական թեմայի: Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Վ.Վ. Ենգիդունյանն արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և
սոցիալական տեխնոլոգիաների
ամբիոնի դոցենտ, ս.գ.թ.
Ն.Ա. Մելքոնյան

Տիկին Ն.Ա. Մելքոնյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար, ք.գ.թ.



Մ.Վ. Հովհաննիսյան

25 օգոստոս 2025թ.